

ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Հանձնման ամսաթիվ – 2013

ԵՆԹԱԾՐԱԳԻՐ II – ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

L2860-ICB-1-01/1 Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն
գյուղեր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ.....	5
2.1. Ջրամատակարարման գոյություն ունեցող համակարգերի նկարագրություն.....	5
2.2. Առաջարկվող վերականգնման աշխատանքների նկարագրություն.....	6
3. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	8
3.1. ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղական համայնքների աշխարհագրական դիրքը և կլիման.....	8
3.2. Կենսաբազմազանություն.....	9
4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	10
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	11
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ.....	13
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	15
Հավելված Ա	16
Հավելված Բ	19

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ ԲՆ - Հայաստանի Հանրապետության Բնապահպանության Նախարարություն

ՀՀ ԱՆ - Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարություն

ՀՀ ՏԿՆ - Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի Կապի Նախարարություն

ՀՀ ՄՆ - Հայաստանի Հանրապետության Մշակույթի Նախարարություն

ՀՁ - Համատեղ Ձեռնարկություն

ՏԻՄ – Տեղական Ինքակառավարման Մարմիններ

ՇՄԱԳ - Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում

ՀԶԿ/ԱԶԲ ԾԿԳ - Հայջրմոջղկոյուղի/ Ասիական Ջարգացման Բանկի Ծրագրի Կառավարման

Գրասենյակ

ՇՄԿՊ- Շրջակա միջավայրի կառավարման պլան

ՇՄՆՁ - Շրջակա միջավայրի նախնական զննություն

ԱՆ - Աշխատանքային նախագիծ

Ըստ ԱԶԲ Շրջակա միջավայրի քաղաքականության (նոյեմբեր, 2002թ.) ենթաձրագիրը դասվում է B կարգի՝ որը լիարժեք /լայնածավալ ՇՄԱԳ չի պահանջում: Ենթաձրագիրը չի պահանջում նաև Բնապահպանական փորձաքննության եզրակացություն՝ ըստ ՀՀ-ում գործող օրենսդրության՝ ՀՀ Օրենք Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին (20 նոյեմբեր 1995թ.) և ՀՀ Կառավարության որոշում Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին (N-193, 30 մարտի 1999թ.):

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դոդոս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման ենթաձրագրի համար, որոնց նախագծումը կատարվել է ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՍՊԸ-ների ՀՁ-ի կողմից: Ջրամատակարարման համակարգերի վերականգնումը ներառում է ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերանորոգման, նոր ջրագծերի, կարգավորիչ և ջրաչափական հանգույցների կառուցման աշխատանքներ:

Այդ աշխատանքների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններ կարող են առաջանալ շինարարական աշխատանքների իրականացման, ջրամատակարարման համակարգերի հետագա շահագործման և պահպանման գործընթացներում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կլինեն փոքրածավալ և կկրեն ժամանակավոր բնույթ: Այդ ազդեցությունները կարող են ներառել՝ բուսականության հատումը, հողի էրոզիան, օդի աղտոտումը, ինչպես նաև հողային ու ջրային ռեսուրսների աղտոտումը՝ քսայուղերով, քլորի միացություններով, կենցաղային և շինարարական աղբով:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները նվազում են և պայմանավորված կլինեն հիմնականում շահագործման կանոնների ոչ պատշաճ իրականացումով:

Բարելավման աշխատանքների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա դրական ազդեցությունը պայմանավորված կլինի ջրային ռեսուրսների պահպանությամբ, ինչպես նաև ավելի արդյունավետ և կայուն օգտագործմամբ:

Ջրամատակարարման համակարգերի բարելավման սոցիալական և տնտեսական ազդեցությունները իրենց բնույթով կլինեն երկարատև, մեծ մասամբ դրական և կներառեն՝ խմելու, ոռոգման և կոյուղու կեղտաջրերի խառնման բացառում, ջրերի աղտոտման վտանգի նվազում, խմելու ջրում վարակիչ հիվանդությունների հարուցիչների ներթափանցման կանխում և բացառում, բնակչությանը ջրամատակարարման տևողության ավելացում, կայուն ջրօգտագործման ապահովում, ջրի արդյունավետ սպառում:

ՇՄԿՊ Գլուխ 5-ում բերվում են ջրամատակարարման համակարգերի բարելավման ձրագրի իրականացման տարբեր փուլերում հնարավոր բացասական ազդեցությունների և անհրաժեշտ մեղմացնող միջոցառումների նկարագրությունները:

- *Նախագծային փուլում*

Ջրային համակարգերի նախագծային աշխատանքները կատարվել են և ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՍՊԸ-ների ՀՁ-ի կողմից, որն ընտրվել է որպես ԱԶԲ «Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ձրագրի՝ լրացուցիչ ֆինանսավորման» նախագծային, շինարարության հսկողության և հանրային իրազեկման ծառայությունների մատուցման խորհրդատու: ՇՄԿՊ-ը ներառում է՝ տվյալ փաթեթի մեջ նարառված համայնքների կլիմայական պայմանների, ռելիեֆի, բնահողի տեսակների, ջրաբանության և կենսաբազմազանության վերաբերյալ հոդվածներ, ՀՀ ԲՆ և այլ

Ունեցողներին անհրաժեշտ թույլտվություններ ձեռք բերման վերաբերյալ պահանջներ, ինչպես նաև ենթաօրագրի իրականացման կողմերի պարտականությունները իրականացման բոլոր փուլերում: Նախագծային փաստաթղթերում ընդգրկված են համապատասխան բնապահպանական ու սոցիալական հոդվածներ և սույն ենթաօրագրի ՇՄԿՊ-ի առանձին աղյուսակ: Նախագծի խորհրդատուն պարտավոր է հետևել ՀՀ բնապահպանական և սոցիալական օրենսդրության համապատասխան դրույթներին, ինչպես նաև ԱԶԲ ուղեցույցների ու ռազմավարությունների պահանջներին:

- *Շինարարության փուլում*

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ՇՄԿՊ-ի մեջ ներառված է առանձին աղյուսակ, որտեղ ներկայացված են պահանջվող մեղմացնող միջոցառումների ցանկը (ՀԱՎԵԼՎԱԾ Ա):

- Շինարարության կապալառուն պետք է խիստ հետևի և ապահովի ՇՄԿՊ-ի մեջ ներառված շրջակա միջավայրի աղդեցությունը մեղմացնող միջոցառումների կատարմանը: *Շահագործման փուլում՝*

Շահագործումը պետք է իրականացվի՝ համաձայն ջրամատակարարման համակարգի շահագործման կանոնների ու նորմերի:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

2.1. Ջրամատակարարման գոյություն ունեցող համակարգերի նկարագրություն

Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դոդս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղական համայնքների ջրամատակարարման բաշխիչ ցանցերի ընդհանուր երկարությունը մոտ 54 կմ է: Համայնքների ջրամատակարարումն իրականացվում է Աշտարակի տարածաշրջանի Բազմաղբյուրի և Ղազարավանի ստորերկրյա ջրաղբյուրներից: Ջրամատակարարման համար աղբյուրակապերից եկող ջրատարներից ենթաօրագրում ընդգրկված համայնքների համար իրականացվել են՝

- Ամբերդ համայնքի համար չորս միացումներ՝ 150, 125, 100 և 75 մմ տրամագծերով պողպատե ջրատարներով,
- Այգեշատ համայնքի համար հինգ միացումներ, որոնցից հիմնական սնող են հանդիսանում 150 մմ պողպատե և 63 մմ պոլիէթիլենե ջրատարները,
- Դաշտ համայնքի համար ութ միացումներ, որոնցից հիմնական սնող են հանդիսանում 100 մմ, 75 մմ և 50 մմ տրամագծերով պողպատե ջրատարները,
- Դոդս համայնքի համար երկու միացումներ՝ 150 մմ և 125 մմ տրամագծերով պողպատե խողովակներով,
- Աղավնատուն համայնքի համար երկու միացումներ՝ 200 մմ և 50 մմ տրամագծերով պողպատե ջրատարներով,
- Լեռնամերձ համայնքի ջրամատակարարումն իրականացվում է մեկ կետում՝ 200 մմ տրամագծի պողպատե խողովակով:

Ջրատարների միջոցով ջուրն անմիջապես տրվում է բաշխիչ ցանց:

Բնակավայրերում ջրամատակարարումն իրականացվում է ոչ բարվոք վիճակում գտնվող ջրամատակարարման ցանցերի միջոցով: Ներքին ցանցն ամբողջությամբ կառուցված

է պողպատե խողովակներից, որոնք գտնվում են վթարային վիճակում: Բնակավայրերի բաշխիչ ցանցերի մեծ մասը քայքայված է, հոսակորուստները բաշխիչ ցանցում զգալի չափերի են հասնում: Նշված բնակավայրերը սնող համակարգերում չհաշվարկված ջրաքանակը կազմում է մինչև 88%: Համակարգում ջրի սպառման հաշվառումը լիարժեք չի կատարվում:

2010-2011 թ. Այգեշատ և Աղավնատուն գյուղերում «ՀայՋԿ» ՓԲԸ-ի և համայնքների համատեղ ուժերով վերակառուցվել են պոլիէթիլենե ջրագծեր և բաշխիչ ցանցեր, Աղավնատուն համայնքում տեղադրվել են նաև անհատական ջրաչափական հանգույցներ:

2.2. Առաջարկվող վերականգնման աշխատանքների նկարագրություն

Այս ենթաժրագրի նպատակն է՝ վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն բնակավայրերի ջրամատակարարման համակարգը, ապահովել գյուղական համայնքների բնակչությանը անվտանգ խմելու ջրով և բարելավել ջրի բաշխման ու հաշվառման համակարգերը:

Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղերում բնակչության թիվը 01.01.2012թ. դրությամբ ընդհանուր կազմում է 10652 մարդ: Բաժանորդների ընդհանուր թիվը գյուղական համայնքներում կազմում է 1851:

Հաշվի առնելով հեռանկարային զարգացման աճը մինչև 2040թ, 0.43% տարեկան աճի հաշվարկով՝ գյուղական համայնքների բնակչությունը կկազմի 11809 մարդ:

Բնակավայրերի համար, հաշվի առնելով նաև հոսակորուստները միջին օրական ջրապահանջի նորման, ընդունվել է 200լ/օր մարդ ջրաքանակը:

Գյուղական համայնքների առավելագույն օրվա ջրապահանջի միջին ժամային ելքը կազմում է $Q_{միջ.ժամ} = 117.4$ լ/վրկ:

Հիմք ընդունելով նախնական նախագծում կատարված տեխնիկա-տնտեսական հաշվարկները և հիմնավորումները, աշխատանքային նախագծով ջրամատակարարման բարելավման համար մշակվել են բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքներ:

Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղական համայնքների ջրամատակարարման համակարգի բարելավման համար սույն աշխատանքային նախագծով նախատեսված են հետևյալ աշխատանքները:

- de50-de200 տրամագծերի պոլիէթիլենե ջրագծերի կառուցում՝ 36900 գծմ
- Փականային հանգույցների կառուցում՝ 48 կոմպլ
- Անհատական տների մուտքագծերի կառուցում՝ 18210 գծմ
- Անհատական տների ջրաչափական հանգույցների կառուցում՝ 1647 կոմպլ
- de50-de200 տրամագծերի պոլիէթիլենե խողովակներով ջրամատակարարման արտաքին ցանցի վերակառուցում, լվացում, ախտահանում՝ 133 գծմ

Նախախատեսված աշխատանքների խոշորացված ցուցանիշները ենթաժրագրում ընդգրկված գյուղական համայնքների համար բերված են աղյուսակ 1-ում:

աղյուսակ 1

Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Գ. Ամբերդ	Գ. Այգեշատ	Գ. Դաշտ	Գ. Դոլս	Գ. Լեռնամեծ	Գ. Սուսալեռ	Գ. Շահումյան	Գ. Շահումյան թ/Ֆ	Գ. Պտղունք	Գ. Աղախյանտուն	Գ. Ոսկեկազ	Գ. Ոսկեխատ	Գ. Օշական	Գ. Նորակերտ	Ընդամենը
de50-de200 տրամագծերի պոլիէթիլենե խողովակներով ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցում,	զծմ	6100	5400	6300	4500	3100	7700	5200	2900	7900	11500	15000	3700	20900	11300	111500
նույնի փորձարկում, լվացում, ախտահանում,	զծկմ	6.1	5.4	6.3	4.5	3.1	7.7	5.2	2.9	7.9	11.5	15	3.7	20.9	11.3	111.5
Փականային հանգույցների կառուցում	կոմպլ	12	9	6	7	3	24	13	7	10	11	20	9	14	35	180
Անհատական տների մուտքագծերի կառուցում	զծմ	2060	3065	2060	2740	1265	5010	3900	2130	3205	7020	8580	1350	13550	5650	61585
Անհատական տների ջրաչափական հանգույցների կառուցում	կոմպլ	184	305	184	231	100	465	360	180	285	643	700	104	1300	476	5517
de50-de200 տրամագծերի պոլիէթիլենե խողովակներով ջրամատակարարման Արտաքին ցանցի վերակառուցում, լվացում ախտահանում,	զծմ	-	-	-	-	133	-	-	-	-	-	-	-	-	-	133
Բազմաբնակարան և հասարակական շենքերի մուտքագծերի փոխարինում	հատ	-	-	-	-	-	16	-	-	-	-	-	-	-	11	27

Ըստ Պատվիրատուի, Խորհրդատուի և գյուղական համայնքների միջև ձեռք բերված համաձայնության, անկախ տվյալ փողոցով անցնող ջրագծի տրամագծի և նշանակության, շինարարության ավարտին անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Բարեկարգ վիճակում գտնվող ասֆալտբետոնե ծածկույթներով բանուկ փողոցներում վերականգնել ասֆալտբետոնե ծածկույթը՝ նույն որակով,
2. Քայքայված և կիսաքանդ վիճակում գտնվող ասֆալտբետոնե ծածկույթներով փողոցներում խրամուղիների ետլիցքի, ապա 10-15սմ հաստությամբ խճի շերտի իրականացում՝ տոփանումով:

3. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դոդս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղական համայնքների աշխարհագրական դիրքը և կլիման

ՀՀ Արմավիրի մարզի դիտարկվող տարածքը գտնվում է միջին բարձրության նախալեռնային հարթության վրա, որտեղ ռելիեֆը թույլ ալիքավոր է, մասամբ մասնատված ձորակներով: Ծրագրում ընդգրկված բնակավայրերը մարզկենտրոն Արմավիր քաղաքից գտնվում են 25-30կմ դեպի հյուսիս-արևելք, իսկ Երևան քաղաքից՝ 20-22կմ հյուսիս-արևմուտք:

Տարածաշրջանը բնութագրվում է տաք, շոգ ամառով և ցուրտ անհողմային ձմեռով, որտեղ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 21,5°C է, իսկ հունվարի միջին ջերմաստիճանը՝ 3.8°C է: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 41°C է, իսկ բացարձակ նվազագույնը -31°C է: Միջի տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 280-340մմ է: Ջրան ծածկույթի հաստությունը հասնում է 42 սմ: Գրունտի սառեցման խորությունը 0.50-0,70 մետր է՝ կախված բացարձակ բարձրությունից: Օդի միջին բազմատարյա հարաբերական խոնավությունը կազմում է 59%: Քամու միջին տարեկան արագությունը 1,8մ/վրկ է:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը ներկայացնում է կուտակումային ռելիեֆով, թույլ թեքությամբ հարթավայր: Այն գտնվում է Արարատյան հարթավայրի արևմտյան մասի նախալեռնային գոտում, Արաքս գետի ձախափնյա դարավանդում (կուտակիչ դարավանդեր, ողողահուն):

Էկզոգեն երկրաբանական երևույթներից տարածքում առկա են մակերեսային էրոզիան, ջրողողում մթնոլորտային տեղումներից, հունափոխում և հունախորացում մշտական և ժամանակավոր հոսքերի ձորակներում, տեխնածին երևույթներ և այլն:

Բնակավայրերի բնակելի տարածքները գտնվում են 800-1000մ նիշերի սահմաններում:

3.2 Կենսաբազմազանություն

Տարածաշրջանում գերակշռում են կիսաանապատային գորշ հողերը, որոնք ներկայացված են խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացված հողերով և հիդրոնորֆ աղուտներով: Այդ հողերը ձևավորվել են լճա-ալյուվիալ նստվածքների վրա:

Տարածքին արևմուտքից, հարավից և արևելքից սահմանակից է Արարատյան դաշտավայրը, որտեղ երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ վերին պլիոցենյան հասակի ալյուվիալ-պրոլյուվիալ լճագետային, հեղեղային նստվածքները: Այդ նստվածքները ներկայացված են կավային շերտախմբով, որոնք տեղ-տեղ անցնում են կոպչի, ավազի և կավավազի ենթաշերտերի՝ 5-10 սմ, երբեմն ավելի հզորություններով: Նստվածքների ստվարաշերտը իր հերթին ծածկված է չորրոդական հասակի ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով, կամ հրաբխային համալիրներով՝ անդեզիտաբազալտներ, դաջիտներ:

Շրջանը սնող խոշոր ջրային զարկերակը Արաքս գետն է՝ իր Մեծամոր, Վեդի վտակներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը հարուստ է գրունտային ջրերով: Նրանք հանդիպում են տարբեր խորությունների վրա՝ սկսած 0-5-ից 100 և ավելի մետր խորություններում: Ստորերկրյա ջրերի առկայությունը պայմանավորված է լճա-գետային գոյացություններով և ճաքճքված անդեզիտա-բազալտներով:

Ֆիզիկա-երկրաբանական նեգատիվ երևույթները տարածքում բացակայում են: Տարածաշրջանը գտնվում է 9 բալ երկրաշարժերի հնարավոր ուժգնության շրջանում:

Բուսական աշխարհ Տարածքի բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանի ավազա-կավային մայր ապարների վրա զարգացած կիսաանապատային և անապատային բուսականության տեսակներով՝ օշինդրա-էֆենդրային և հալոֆիլ մասնակցությամբ:

Այս լանդշաֆտային գոտում գրանցված է մոտ 130 բուսատեսակներ, որոնցից որպես դոմինանտ հանդիսանում են՝ հովվափող լանցետային (ALISMA LANCEOLATUM), սովորական նետախոտը (SAGITARIA SAGITTIFOLIA L.), եռատերև նետախոտը (SAGITARIA TRIFOLIA L.), խոզանափուռ բարակը (CAUCINIA ENELLA), օշան Թամանջյանի (SALSOLA TAMAMSCHJANAE), սպանախ քառաեզ (SPINACIA TETRONDA), գազ տարօրինակ (ASTRAGALUS PARADOXUS), հացհամեն գլխիկավոր (TRIGONELLA CAPITATA), ցորեն Արարատյան (TRITICUM ARARAICUM), կարմրան (TAMARIX), կարմրան ութառեջանի (TANARIX OCTANDRA) և այլն:

Վայրի օգտակար բուսատեսակներից տարածված են՝ արջընկույզ սովորական (Datura stramonium) իշավարունգ սովորական (Ecballinum elaterium) և սպանդ սովորական (Reganum harmala):

Տարածքում պահպանության կարիք ունեցող բուսատեսակներից են՝ Acorus calamus L. Խնկեղեգ ճահճային, Connvolvulus commutatus Boiss Պատատուկ փոփոխական, Lactuca Takhtadzani Sosn Կաթնուկ Թախտաջյանի, Astragalus paradoxus Գազ տարօրինակ և այլն:

Կենդանական աշխարհ Այս լանդշաֆտային գոտում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ: Դիտարկվող տարածքին բնորոշ և դոմինանտ կենդանիների տեսակներից են՝ Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L.(կաքավ), *Grus grus* L. (կռունկ), Հայկական որոր (*Larus armeniacus* But.) և այլն:

Տարածաշրջանում ողնաշարավորներից ամենուր հանդիպում են՝ լճագորտ, սովորական լորտու, գյուրգա, կաչաղակ, գայլ, աղվես, աքիս, իսկ անողնաշարավորներից՝ մրջյուն, ծղրիղ, ճռիկ, մոծակ, կապտաթիթեռ, կաղամբաթիթեռ և այլն:

Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Erinaceus auritas* Gmelin Լայնականջ ոզնի, *Rhinolophus Mehelyi* Մեհելիի պայտաքիթ, *Vormela peregusna peregusna* Guld. Հարավուսական խայտաքիս, *Plagadis falcinellus* Linneaus Քաջահավ:

4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ակնկալվում են հետևյալ դրական ազդեցությունները.

- ջրային ռեսուրսների պահպանություն և կայուն օգտագործում,
- խմելու և ոռոգման, կոյուղու կեղտաջրերի խառնման բացառում,
- խմելու ջրում վարակիչ հիվանդությունների հարուցիչների ներթափանցման կանխում, բացառում,
- խմելու ջրի աղտոտման վտանգի նվազում,
- խմելու ջրի բարձր որակի ապահովում,
- բնակչության առողջական վիճակի լավացում,
- ջրակորուստների կրճատում,
- բնակչությանը ջրամատակարարման տևողության ավելացում,
- ջրի հաշվառման համակարգի ներդրում
- ջրի սպառման արդյունավետության բարձրացում:

ՇՄՆՁ-ը բացահայտել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղական համայնքների ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների իրականացման արդյունքում գործունեության համար ընտրված տարածքներում լանդշաֆտի, բուսական ու կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Հնարավոր բացասական ազդեցությունների առաջացումը հիմնականում պայմանավորված կլիմայի շինարարական աշխատանքների իրականացմամբ: Այդ ազդեցությունները կլիման փոքրածավալ և կկրեն ժամանակավոր բնույթ: Բացասական ազդեցությունները կանխարգելելու կամ նվազեցնելու նպատակով մշակվել են մեղմացնող միջոցառումներ, որոնք ներառվել են ՇՄԿՊ-ի մեջ :

ՇՄԿՊ-ը հանդիսանում է մրցութային փաթեթի անբաժանելի մաս: Հիմնվելով ՇՄՆԶ-ի վրա, ակնկալվում են հետևյալ բացասական ազդեցությունները

- Օդի աղտոտում
- Աղմուկ
- Երթևեկելի ու հետիոտն ճանապարհների խաթարում և ծանրաբեռնվածություն
- Հողի էրոզիա և հողատարման պրոցեսներ
- Շրջակա միջավայրի աղտոտում շինարարական և կենցաղային աղբով
- Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութով և քսայուղերով
- Ջրային և հողային ռեսուրսների աղտոտում քլորով

Ենթադրագրի իրականացումը կունենա դրական սոցիալական արդյունքներ: Այն անմիջականորեն կբարելավի ծրագրում ընդգրկված գյուղական համայնքների բնակչության կյանքի որակը՝ ապահովելով կայուն և հուսալի ջրամատակարարում և ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործում՝ մոտ 11788 մարդու համար:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղական համայնքներում ջրամատակարարման ներքին ցանցի բարելավման աշխատանքների հետ կապված շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունները պայմանավորված են՝ ջրագծերի խրամուղիների, կարգավորիչ և ջրաչափական հանգույցների փոստրակների շինարարական աշխատանքներով:

Հողի էրոզիան և հողատարման պրոցեսները կանխելու նպատակով անհրաժեշտ է՝ ջրագծերի անցկացման թեք տեղանքում իրականացնել թեքությունները պահպանող միջոցառումներ, նվազագույնի հասցնել ջրագծերի խրամուղիների, ինչպես նաև կարգավորիչ ու ջրաչափական հանգույցների համար փոստրակները բաց թողնելու ժամանակահատվածը:

Գետահուններին մոտ հատվածներում հողատարման պրոցեսների կանխման նպատակով պետք է իրականացվեն թեքությունները պահպանող միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո աշխատանքային տարածքները պետք է վերականգնվեն հետևյալ միջոցառումների իրականացմամբ՝

- շինհրապարակի մաքրում մնացորդային գրունտային զանգվածներից և շինարարական նյութերից,
- բարեկարգ վիճակում գտնվող ասֆալտբետոնե ծածկույթների վերականգնում՝ նույն որակով,
- քայքայված և կիսաքանդ վիճակում գտնվող ասֆալտբետոնե, ինչպես նաև գրունտային ծածկույթով փողոցներում խճի շերտով վերականգնում՝ տոփանումով,

Հողի բերրի շերտի վնասումը, կամ լանդշաֆտի դեգրադացիան կանխելու նպատակով անհրաժեշտ է՝ հողի վերին շերտը պահեստավորել այդ նպատակի համար նախատեսված վայրում, հետագայում օգտագործել տարածքների վերականգնման համար: Շինարարական տարածքը պետք է մաքրվի շինարարական և կենցաղային աղբից և հարթեցվի՝ լանդշաֆտը բերելով նախնական տեսքի:

Հողային և ջրային ռեսուրսների աղտոտումը առելանյութով և քսայուղերով բացառելու համար անհրաժեշտ է վերջիններս պահեստավորել հողային և ջրային ռեսուրսներից

մեկուսացված տարածքներում, հատուկ տարողությունների մեջ: Օգտագործված քայուղերի հավաքման համար նախատեսել հատուկ տարողությունների օգտագործում, որոնք հետագայում կհեռացվեն հատուկ տեղադրման, կամ վերամշակման համար հատկացված վայրեր:

Շինարարական աղբով և մնացորդային հողային զանգվածով շրջակա տարածքների աղտոտումը կանխելու նպատակով՝ համայնքների ղեկավարների կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն, դրանք տեղադրել համապատասխան վայրերում:

Ջրային և հողային ռեսուրսների քլորով աղտոտումը բացառելու նպատակով ջրամատակարարման բաշխիչ ցանցի քլորով լվացման և ախտահանման աշխատանքները կազմակերպել համապատասխան հաշվարկների համաձայն: Քլորի հետ աշխատելիս անհրաժեշտ է պահպանել սահմանված տեխնոլոգիական գործընթացները: Խողովակների լվացումից հետո, քլորի արտահոսքը դեպի մակերևութային ջրային օբյեկտ կամ ցամաքային տարածք իրականացնել նախագծով նախատեսված ռեժիմի և հաշվարկի համաձայն:

Ջրի որակի փոփոխություն: Շրջակա միջավայրի մոնիտորինգի իրականացման ընթացքում պետք է սահմանվի հսկողություն՝ ջրի որակի և մնացորդային քլորի մակարդակի նկատմամբ:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջագոյ փոշու ազդեցությունը նվազեցնելու համար պարբերաբար ջրել շինարարության տարածքը,

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով մշակել ժամանակացույց, սահմանափակել գիշերային աշխատանքը բնակեցված տարածքներում, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառած անհանգստությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է տրամադրել սահմանված վայրեր՝ բեռնատար մեքենաների կայանման համար, շինարարությունն իրականացնել ըստ փուլերի, շինարարական աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ տրամադրելով բնակչությանը, տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ, շրջանցումներ կամ պատնեշներ:

Շինարարության ժամանակ բնակչությանը և շինարարներին սպառնագոյ վտանգները կանխելու նպատակով ցանկապատել շինհրապարակը, վերահսկել չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ, վտանգավոր տեղերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ որակավորված աշխատակիցների միջոցով, ինչպես նաև պարբերաբար անվտանգության աուդիտներ, շինարարների համար կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ:

Ազդակիր կողմերը և տեղի բնակչությունը պետք է պատշաճ կերպով հանրային խորհրդակցությունների միջոցով իրազեկվեն սպասվելիք աշխատանքների, դրանց ժամանակացույցերի և ՇՄԿՊ-ում ներառված բոլոր միջոցառումների մասին, քանի որ տեղեկատվության պակասը կարող է դժգոհությունների և բողոքների առիթ հանդիսանալ: Ենթաժողովի աշխատանքներին համայնքների մասնակցության ապահովման արդյունքում հնարավորինս կնվազեցվի շինարարական աշխատանքների պատճառած անհանգստությունը՝ համայնքի հասարակական կյանքին:

Խմելու ջրի որակի փոփոխություն: Շրջակա միջավայրի մոնիտորինգի պլանը պետք է ներառի նաև հսկողություն ջրի որակի և մնացորդային քլորի մակարդակի նկատմամբ:

Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղական համայնքների խմելու ջրի որակը ապահովելու նպատակով ՀՋԿ-ն պետք է իրականացնի պլանային նմուշառում համայնքները սնող ջրաղբյուրներից՝ ստուգելով Առողջապահության նախարարության կողմից պահանջված բոլոր չափանիշները: Ջրի որակի մոնիտորինգ իրականացվում է նաև Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից, ըստ «խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողություն № 2-III-Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր» (գրանցված է 28.12.2002թ), փաստաթղթի, որով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող պահանջները, ինչպես նաև արտադրվող ու բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները:

Քանի որ իրականացվում է խմելու ջրի վարակազերծում քլորով, ապա կարևոր է նաև խմելու ջրում քլորի մնացորդի մոնիտորինգը:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Առաջարկված մեղմացնող միջոցառումների իրականացման համար կազմակերպչական պարտավորությունները բաշխված են հետևյալ գործակալությունների միջև:

- ***Իրականացնող գործակալություններ, որոնք պատասխանատու են միջոցառումն իրականացնելու համար:***

1. Այս հատուկ առաջադրանքի համար, իրականացնող գործակալությունը նախագծային փուլում (ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՍՊԸ-ների ՀՁ-ն) պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ համաձայնությունների ու թույլատվությունների ձեռքբերումը համապատասխան պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններից՝ նախքան շինարարական աշխատանքները մրցութային կարգով բաշխելը:

- բնապահպանական փորձաքննության եզրակացություն (անհրաժեշտության դեպքում),
- պատմա-մշակութային հուշարձանների պահպանության պետական գործակալության համաձայնություն, եթե նախագծով նախատեսվում է վերջիններիս վրա ազդեցություն:

2. Իրականացնող գործակալությունները շինարարության փուլում (շինարարության կապալառուներ) պատասխանատվություն են ստանձնելու ՇՄԿՊ-ով նախատեսված մեղմացման միջոցառումների ֆիզիկական իրականացման, ինչպես նաև շինարարական աշխատանքների կատարման հետ կապված բոլոր թույլատվությունների ու համաձայնությունների ստացման համար: Դրանք են՝

- տեղական ինքնակառավարման մարմիններից թափոնների ու շինարարական աղբի տեղադրման սահմանված վայրերի վերաբերյալ գրավոր համաձայնությունները,
- պատմա-մշակութային հուշարձանների պահպանության պետական գործակալության համաձայնությունը, եթե անսպասելիորեն հայտնաբերվում են պատմամշակութային կամ հնագիտական հուշարձաններ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում:

3. Մինչև շինարարական աշխատանքների սկսելը ADB/PMU-ի կողմից անհրաժեշտության դեպքում պետք է ձեռք բերվեն հետևյալ թույլտվությունները և վկայականները՝

- հողօգտագործման իրավունքի գրանցման վկայական
- անհրաժեշտության դեպքում ջրօգտագործման թույլտվություն:

- **Վերահսկող գործակալություններ, որոնք պատասխանատու են վերահսկել իրականացնող միավորներին՝ ապահովելու վերջիններիս կողմից ՇՄԿՊ պլանի միջոցառումների կատարումը:**

1. “Հայջրմուղ” ՓԲԸ/ԱԶԲ ԾԿԳ-ի բնապահպանության և անվտանգության մասնագետները պատասխանատու կլինեն ՇՄԿՊ-ով նախատեսված մեղմացնող միջոցառումների իրականացման վերահսկման համար: Նշված մասնագետները պարբերաբար ստուգայցեր կկատարեն շինարարական հրապարակներ, աշխատանքների և ազդեցությունների մեղմացմանն ուղղված համապատասխան միջոցառումների պատշաճ իրականացումը վերահսկելու նպատակով: Այցերի ընթացքում ստուգաթերթիկի միջոցով կվերհանվեն հնարավոր բացթողումները, ինչպես նաև կբացահայտվեն շինարարական կազմակերպության կողմից մեղմացման միջոցառումների իրականացման խախտումները:

“Հայջրմուղ” ՓԲԸ/ ԱԶԲ ԾԿԳ-ն իրավունք ունի նաև պահանջել և ստուգել, թե արդյոք առկա և վավերական (Ժամկետանց չեն) են բոլոր թույլատվությունները, արդյոք շինարարության փուլում հիմնովին կատարվել է ՇՄԿՊ-ն՝ ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և մոնիտորինգի մասով, ըստ ԱԶԲ-ի բնապահպանական ուղեցույցների և ըստ ՀՀ բնապահպանական ու սոցիալական օրենսդրության:

2. ՀԳՇՆ և ՋԻՆՋ ՍՊԸ-ների ՀՁ-ի կողմից ևս պետք է իրականացվի մեղմացնող միջոցառումների կատարման վերահսկողություն շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում: Բնապահպանության մասնագետը պետք է այցեր կատարի ՇՄԿՊ-ի կատարումը հսկելու նպատակով:

- **Պետական մոնիտորինգ իրականացնող գործակալություններ, որոնք պատասխանատու են ՇՄԿՊ-ի իրականացման աստիճանն ու ազդեցությունները մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը դիտարկելու և անհրաժեշտության դեպքում, ծրագրի մեջ ճշտումներ մտցնելու համար:**

Սոնիտորինգ իրականացնող պետական գործակալություններն են՝

- ՀՀ Բնապահպանության նախարարության Պետական բնապահպանական տեսչությունը,
- ՀՀ Առողջապահության նախարարության Պետական հակահակահամաճարակային տեսչությունը,
- Ահրաժեշտության դեպքում, ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային հուշարձանների պահպանության գործակալությունը
- ՀՀ Տեղական ինքնակառավարման մարմինները
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը

ՇՄԿՊ-ում ընդգրկված բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը ներառված են աշխատանքային նախագծերում:

Բնապահպանական ազդեցությունների համար մեղմացնող միջոցառումների իրականացումը պետք է վերահսկվի շինարարական տեղամասեր պարբերաբար այցերի միջոցով: Այցերի ընթացքում հատուկ նշակված ստուգաթերթիկի օգնությամբ կհայտնաբերվեն բացթողումները և թերությունները:

Մեղմացնող միջոցառումների չիրականացման, կամ խախտման դեպքում նախազգուշացումից հետո, դրան հաջորդող վճարումը կդադարեցվի՝ մինչև խախտման լիովին վերացումը:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Շրջակա միջավայրի կառավարման պլանը /ՇՄԿՊ/ պետք է հիմնված լինի ենթածրագրի շրջանակում մշակված շրջակա միջավայրի նախնական զննության /ՇՄՆՁ/ արդյունքների հիման վրա և պետք է ներառի համապատասխան մեղմացնող միջոցառումներ: Շրջակա միջավայրի կառավարման պլանը բաղկացած է երկու բաղադրիչներից.

1. Մեղմացնող միջոցառումներ և վերջիններիս իրականացման համար համակարգային /ինստիտուցիոնալ/ պարտավորություններ
2. Շրջակա միջավայրի մոնիտորինգ

Կապալառուն պարտավոր է խիստ հետևել ՇՄԿՊ-ի մեջ ներառված շրջակա միջավայրի վրա ազդեցությունները մեղմացնող, ինչպես նաև մարդկանց առողջությունը և անվտանգությունը ապահովող միջոցառումների կատարմանը: ՇՄԿՊ-ի մեջ ներառված բոլոր միջոցառումների իրականացման գումարները ներառված են շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքի մեջ:

- Ցանկացած միջոցառման խախտումը, որը կարձանագրվի Տեխնիկական Վերահսկիչի կամ Գործատուի կողմից գրավոր տեսքով, կուղարկվի Կապալառուին, որպես նախազգուշացում:
- Մեկ նախազգուշացումից հետո հաջորդ արձանագրված խախտումը կառաջացնի գումարային տուգանքներ ընդհանուր պայմանագրի 0,1 % չափով: Տուգանքը չի ազատում Կապալառուին տվյալ խախտումը վերացնելու պարտադիր պայմանից: Խախտումը պետք է վերացվի 2 աշխատանքային օրվա ընթացքում: Տուգանքի գումարները կպահվեն հաջորդ Կատարողական ակտից, իսկ շինարարական աշխատանքների ավարտից հետո արձանագրված խախտումների գումարները կպահվեն Երաշխիքային գումարներից:
- 3 արձանագրված խախտումները, որոնք առաջացրել են տուգանքներ կարող են առաջացնել Պայմանագրի միակողմանի լուծում:

Շրջակա միջավայրի կառավարման արյուսակը ենթածրագրի շրջանակներում ընդգրկված՝ Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Աղավնատուն գյուղերի համար ներկայացված է Հավելված Ա-ում:

Հավելված Ա

Շրջակա միջավայրի կառավարման աղյուսակ

Աշխատանքները և հնարավոր ազդեցությունը	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Մոնիտորինգ	Պատասխանատու մարմիններ
1 Օդի աղտոտում , աղմուկ և երթևեկելի ու հետիոտն ճանապարհների խաթարում և ծանրաբեռնվածություն			
<ul style="list-style-type: none"> ▪ Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող փոշի և աղմուկ 	<ul style="list-style-type: none"> - Ցանկապատել շինհրապարակը, - պարբերաբար ջրել շինհրապարակը և ճանապարհները, - սահմանափակել գիշերային աշխատանքը բնակեցված տարածքներում, - Խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ, 	<p>Տեղանքի ամենօրյա զննում</p>	<p>Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ</p>
<ul style="list-style-type: none"> ▪ ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառած անհանգստություն 	<ul style="list-style-type: none"> - Տրամադրել բեռնատար մեքենաներին ապահով տարածք, - Կենցաղային աղբը չկուտակել և չայրել շինարարական հրապարակում, - Շինարարությունն իրականացնել ըստ փուլերի և ժամանակացույցի, աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ տրամադրելով բնակչությանը - Տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ, շրջանցումներ կամ պատնեշներ, սահմանել մեքենաների կայանման վայրեր - Ապահովել համայնքի մասնակցությունը ենթածրագրի աշխատանքներին, ինչը կնվազեցնի շինարարական աշխատանքների պատճառած անհանգստությունը համայնքի հասարակական կյանքին: 	<p>Տեղանքի ամենօրյա զննում</p>	<p>Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ, ՏԻՄ</p>
2 Շրջակա միջավայրի խաթարում և աղտոտում			
<ul style="list-style-type: none"> • Հողի էրոզիա և հողատարում 	<ul style="list-style-type: none"> - Ջրագծերի անցկացման թեք տեղանքում իրականացնել թեքությունները պահպանող միջոցառումներ՝ կանխելու համար հողի էրոզիան և 	<p>Շինարարության և պայմանագրի տեխսպասարկման փուլերի ամենօրյա</p>	<p>Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ,</p>

	<p>հողատարման պրոցեսները, - Նվազագույնի հասցնել ջրագծերի խրամուղիները, ինչպես նաև կարգավորիչ ու ջրաչափական հանգույցների համար փոսորակները բաց թողնելու ժամանակահատվածը,</p>	զննում	
<ul style="list-style-type: none"> • հողի բերրի շերտի վնասում, կամ լանդշաֆտի դեգրադացիա 	<ul style="list-style-type: none"> - հողի բերրի շերտը պահեստավորել այդ նպատակի համար նախատեսված վայրում, հետագայում օգտագործել տարածքների վերականգնման նպատակով, - աշխատանքների ավարտից հետո մաքրել տարածքը, հարթեցնել, լանդշաֆտը բերել նախնական տեսքի 		Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ, ՏԻՄ
<ul style="list-style-type: none"> ▪ Շրջակա տարածքի աղտոտում շինարարական աղբով 	<ul style="list-style-type: none"> - համայնքների ղեկավարների կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն, շինարարական աղբը տեղադրել համապատասխան վայրերում, շինարարական աշխատանքների ավարտից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում վերանորոգել վնասված մակերեսներն ըստ նախագծի, 	Շինարարական աշխատանքների իրականացնելուց հետո պահանջվող միջոցառումների իրականացման հսկում	Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ, ՏԻՄ
<ul style="list-style-type: none"> • Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութով և քսայուղերով 	<ul style="list-style-type: none"> - Պահեստավորել վառելանյութերը և քսայուղերը մեկուսացված մակերեսի վրա՝ հողային և ջրային ռեսուրսներից հեռու տարածքներում, - Օգտագործված քսայուղերի հավաքման համար նախատեսել հատուկ տարողությունների օգտագործում, որոնք կահավորված կլիներ հոսակորուստների հավաքման համակարգով 	Շինարարական հրապարակի ամենօրյա զննում	Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ,

<ul style="list-style-type: none"> ▪ Ջրային և հողային ռեսուրսների աղտոտում քլորով 	<ul style="list-style-type: none"> - Ջրամատակարարման բաշխիչ ցանցը քլորով լվանալու և ախտահանելու աշխատանքների կազմակերպում՝ համաձայն համապատասխան հաշվարկների և տեխնոլոգիական պայմանների - Խողովակների լվացումից հետո քլորի դեպի մակեևոթային ջրային օբյեկտ կամ ցամաքային տարածք արտահոսքի իրականացում ըստ սահմանված կարգի և հաշվարկների: - 	<p>Շինարարական աշխատանքների իրականացնելուց հետո պահանջվող միջոցառումների իրականացման հսկում</p>	<p>Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ,</p>
<p>3. Առողջապահություն և անվտանգություն</p>			
<ul style="list-style-type: none"> ▪ Բնակչությանը և շինարարներին սպառնացող վտանգներ 	<ul style="list-style-type: none"> - Ցանկապատել շինհրապարակը, - Վերահսկել չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ, - Վտանգավոր տեղերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, - Իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ որակավորված աշխատակիցների միջոցով, ինչպես նաև պարբերաբար անվտանգության աուդիտներ, - - Շինարարների համար կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ: 	<p>Շինարարության փուլերի ամենօրյա զննում: Պատահարների հաշվետվությունների և բողոքների ամսական զննում:</p>	<p>Շինարարության կապալարու, Խորհրդատու, ԾԻԳ, Բնակիչներ</p>

Ղաշտային այցերի ստուգաթերթիկ

Ընդհանուր տեղեկատվություն	Ամիս/ ամսաթիվ			
	Ենթաժողով			
	Տեղակայում			
	Շինարարական կազմակերպություն			
	Մարզ			
<u>Նախագծում</u>				
Անհրաժեշտ քույլտվություններ	բնապահպանական փորձ. եզրակացություն	Այո	Ոչ	Ո/Կ
	հողահատկացման գրավոր համաձայնություն	Այո	Ոչ	Ո/Կ
	պատմամշակութային փորձաքննության եզրակացություն	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Շինարարություն</u>				
Անհրաժեշտ քույլտվություններ	շին. թափոնների տեղադրման գրավոր համաձայնություն	Այո	Ոչ	Ո/Կ
	անսպասելիորեն հայտնաբերման դեպքում պատմամշակ. համաձայնություն	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Հասարակության իրազեկում</u>				
	շին. աշխատանքների վերաբերյալ բնակչության համապատասխան իրազեկում համաձայն նախագծի	Այո	Ոչ	Ո/Կ
	համայնքի մասնակցություն շինարարական աշխատանքներին համաձայն նախագծի	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Անվտանգություն</u>				
Բանվորների անվտանգություն	բանվորների անվտանգության հանդերձանքի առկայություն /ականջակալեր, շնչադիմակ	Այո	Ոչ	Ո/Կ
	շինարարության մեջ ներառված տեխնիկական միջոցների պարբերական զննումներ՝ անվտանգությունն ապահովելու նպատակով	Այո	Ոչ	Ո/Կ

Բնակչության անվտանգություն	Երթևեկության սահմանափակման կամ խախտման ժամանակ համապատասխան ճանապարհային նշանների կամ պատճենների տեղադրում, շրջանցի կազմակերպում	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Շինարարության իրականացման ժամանակ մեղմացնող միջոցառումներ</u>				
Շին. հրապարակի/ տեղանքի շահագործում	Շին հրապարակի / տեղանքի պարբերաբար ջրում	Այո	Ոչ	Ո/Կ
	Մեքենաների համար ապահով տարածքի առկայություն շին. հրապարակում	Այո	Ոչ	Ո/Կ
	Յուղերի և քուկների համապատասխան պահեստների առկայություն շին. հրապարակում	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Օդի ժամանակավոր աղտոտում</u>				
	շինանյութ տեղափոխող բեռնատարների վրա ծածկի օգտագործում	Այո	Ոչ	Ո/Կ
	շինարարության տարածքի խոնավեցում ջրի շիթով	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Յողի էրոզիա</u>				
	զառիվար տեղերում հողի էրոզիայի կանխարգելման միջոցառումների իրականացում ըստ նախագծի	Այո	Ոչ	Ո/Կ
	փոսորակների ժամանակին հետլիցք	Այո	Ոչ	Ո/Կ
	շին. աշխատանքների ավարտից հետո վնասված մակերեսների վերանորոգում ըստ նախագծի	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Ջրի աղտոտում</u>				
	ջրի աղտոտում քսանյութերով և վառելանյութերով	Այո	Ոչ	Ո/Կ
	խողովակների լվացումից հետո քլորի արտահոսք համապատասխան նախագծով նախատեսված ռեժիմի և հաշվարկի	Այո	Ոչ	Ո/Կ
<u>Աղմուկ բնակավայրերի տարածքին մոտ</u>				
	աշխատանքների իրականացում սահմանված աշխատանքային ժամերին, հակառակ դեպքում սահմանված կարգով	Այո	Ոչ	Ո/Կ

Շինարարական և կենցաղային թափոնների տեղադրում				
	շինարարական և կենցաղային աղբի տեղափոխում և տեղադրում համայնքի համապատասխան աղբավայրում	Այո	Ոչ	Ո/Կ
Շահագործում				
Խմելու ջրի աղտոտում	Մնացորդային քլորի քանակի համապատասխանում խմելու որակի ջրի նորմերին	Այո	Ոչ	Ո/Կ